ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՄԳԱՅԻԹՈՒՄ

Ինչպես արդեն հաղորդվել է, փետրվարի 28-ին Սումգայիթում մի խումբ խուլիգան տարրեր անկարգություններ հրահրեցին: Հակահիրավական գործողությունների մեջ ներքաշվեցին անկայուն, տհաս մարդիկ, որոնք ունկել էին Լեռնային Ղարաբաղի և Հայաստանի իրադարձությունների շուրջ տարածվող ստահոդ լուրերի ազդեցության տակ: Քրեական հանցագործ տարրերը բռնագման գործողություններ և կողոպուտներ էին կատարում: Նրանց ձեռքով զոհվել է 31 մարդ, որոնց թվում տարբեր ազգությունների պատկանող անձինք, ծերունիներ և կանայք:

Վճռական միջոցներ են ձեռնարկվել իրադրությունը կարգավորելու համար: Հանցագործությունների մեղավորները ձերբակալված են և քրեական պատասխանատվության կենթարկվեն սովետական օրենքներին խստիվ համապատասխան:

Ստեղծվել է կառավարական հանձնաժողով՝ Ադրբեջանական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Հ. Ն. Սելիդովի գլխավորությամբ: Լուծվում են այն բոլոր հարցերը, որոնք կապված են քաղաքային ծառայությունների անխափան գործունեության ապահովման, հասարակական կարգուկանոնի պահպանման հետ: Անհրաժեշտ օգնություն է ցույց տրվում տուժածներին: Քննության են առնվում քաղաքացիների խնդրանքներն ու դիմումները, որոնց առնչությամբ օպերատիվորեն միջոցներ են ձեռնարկվում:

Քաղաքի աշխատավորները ինքնագսպարություն են դրսևորում, ինտերնացիոնալիզմի զգացումներ ցուցաբերում: Աշխատանքային ռիթմը չի ընդհատվել: Արդյունաբերության, տրանսպորտի, առևտրի, հասարակական սննդի, կենցաղի ծառայության և մյուս ձեռնարկություններն աշխատում են սահմանված ռեժիմով, ուստի նակն հաստատություններում շարունակվում են պարապմունքները:

(ՏԱՍՍ)